338.14
Ц-82

Խմբագիր—Լ. ԴԱՆԵԼՅԱՆ
Թարգմանիչ—Հ. ԱՄԻՐԽԱՆՅԱՆ
Տեխ. խմբագիր—Կ. ԹԱՌԼԱՆՅԱՆ
Սրբագրիչ—Նույնը

338.14
Կ-82

Հանձնված ե արտադրության հոկտեմբերի 25-ին
Ստորագրված ե տպագրելու նոյեմբերի 2-ին
Տպագրված թերթերի թիվը—2½—
Տպագրական թերթում—40.000 տառ
Ֆորմատ 6X11

Тип. „III-й Интернационал" Бакполиграфа, БМП Баку, ул. Саратовца-Ефимова, 37.
Главлит №6972. Заказ № 2909. Формат А-5 Тираж 1000 экз.

# ԿՈԼԽՈԶՆԵՐՈՒՄ ՃՇՏՈՐԵՆ ԲԱԺԱՆԵՆՔ ՅԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ

## „ՊՐԱՎԴԱ"-Ի 1932 Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 19-Ի № 290-Ի ԱՌԱՋՆՈՐԴԸ

Միլիոնավոր նախկին մենատնտեսներ, ներկայումս համախմբված 211 հազար կոլխոզներում, նշանակալից չափով հարըստացած խոշոր սոցիալիստական գյուղատնտեսության կառուցման փորձով, ավարտում են հնգամյակի չորրորդ տարին:

Յերկրի ինդուստրիալիզացիայի հաջողությունների շնորհիվ կուսակցությունն ու բանվոր դասակարգը կոլխոզների տեխնիկական վերազինման ճանապարհին արեցին նոր խոշոր քայլ դեպի առաջ: ՄՏԿ-ներն անցյալ տարվա 1400-ից ներկա մոմենտում հասել են 2,143-ի: ՄՏԿ-ներն արդեն ներկա տարում ընդգրկում են կոլխոզների 52,9%-ը, անցյալ տարվա 37,7%-ի դիմաց:

Կենտկոմի լենինյան քաղաքականությունը թույլ տվեց կոլխոզային արտադրության կազմակերպման գործում ձեռք բերել խոշոր հաջողություններ: Իհարկե, դեռ ևս հեռու յենք կոլխոզների տնտեսական — քաղաքական ամրապնդման մասին ունեցած Կենտկոմի փետրվարի 4-ի յուր նշանակությամբ արտակարգ վորոշման լիակատար ու ամենուրեք կիրառումը:

Բայց մի քանի ակներև ե:

Դիմազրկությանը և հավասարեցմանը հասցրված ե լուրջ հարված:

Կոլխոզային բրիգադան, կոլխոզային արտադրության կազմակերպման մեջ այս հիմնական ողակն արդեն այն չի, ինչ վոր եր անցյալ տարի: Մշտական կազմով արտադրական բրիգադաների կազմակերպումը հնարավորություն ե ստեղծում լիովին վոչնչացնել դիմազրկությունը կոլխոզներում, բարձրացնում ե կոլխոզնիկների շահագրգռվածությունը կոլլեկտիվ աշխատանքի արդյունքների հարցում: Կոլխոզային բրիգադաներում հոսունության վոչնչացումն ոժանդակում ե կոլխոզային ակտիվի արագ դարբնելուն, կոլխոզնիկների մեջ սիստեմատիկ կուսակցական աշխատանք տանելուն և հետևապես սիստեմատիկ դաստիարակության սոցիալիստական վերաբերմունք ցույց տալու կոլլեկտիվ աշխատանքին և հասարակական ունեցվածքի գործում:

Կոլխոզ — շարժման ասպարեզում կուսակցության բոլոր միջոցառումներով կարմիր թելի պես անցնում ե արտելային ձևի համար մղվող պայքարը:

Կուսակցությունը խստորեն ձիգ տվեց նրանց, ովքեր կոլխոզային գյուղացիության սոցիալիստական վերադաստիարա-



БИБЛИОТЕКА ИНСТИТУТА ВОСТОКОВЕДЕНИЯ Академии Наук СССР

Խմբագիր—Լ. ԴԱՆԵԼՅԱՆ
Թարգմանիչ—Հ. ԱՄԻՐԽԱՆՅԱՆ
Տեխ. խմբագիր—Կ. ԹԱՌԼԱՆՅԱՆ
Սրբագրիչ—Նույնը

338.14
Կ-82

Հանձնված ե արտադրության հոկտեմբերի 25-ին
Ստորագրված ե տպագրելու նոյեմբերի 2-ին
Տպագրված թերթերի թիվը—2½—
Տպագրական թերթում—40.000 տառ
Ֆորմատ 6X11

Тип. „III-й Интернационал" Бакполиграфа, БМП Баку, ул. Саратовца-Ефимова, 37.
Главлит № 6972. Заказ № 2909. Формат А-5 Тираж 1000 экз.

# ԿՈԼԽՈԶՆԵՐՈՒՄ ՃՇՏՈՐԵՆ ԲԱԺԱՆԵՆՔ ՅԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ

## „ՊՐԱՎԴԱ"-ի 1932 Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 19-ի № 290-ի ԱՌԱՋՆՈՐԴՈՂԸ

Միլիոնավոր նախկին մենատնտեսներ, ներկայումս համախմբված 211 հազար կոլխոզներում, նշանակալից չափով հարստացած խոշոր սոցիալիստական գյուղատնտեսության կառուցման փորձով, ավարտում են հնգամյակի չորրորդ տարին:

Յերկրի ինդուստրիալիզացիայի հաջողությունների շնորհիվ կուսակցությունն ու բանվոր դասակարգը կոլխոզների տեխնիկական վերազինման ճանապարհին արեցին նոր խոշոր քայլ դեպի առաջ: ՄՏԿ-ներն անցյալ տարվա 1400-ից ներկա մոմենտում հասել են 2,143-ի: ՄՏԿ-ներն արդեն ներկա տարում ընդգրկում են կոլխոզների 52,9%-ը, անցյալ տարվա 37,7%-ի դիմաց:

Կենտկոմի լենինյան քաղաքականությունը թույլ տվեց կոլխոզային արտադրության կազմակերպման գործում ձեռք բերել խոշոր հաջողություններ: Իհարկե, դեռ ևս հեռու յե կոլխոզների տնտեսական — քաղաքական ամրապնդման մասին ընդունեցած Կենտկոմի փետրվարի 4-ի յուր նշանակությամբ արտակարգ վորոշման լիակատար ու ամենուրեք կիրառումը:

Բայց մի բան ակներև ե:

Դիմազրկությանը և հավասարեցմանը հասցրված ե լուրջ հարված:

Կոլխոզային բրիգադան, կոլխոզային արտադրության կազմակերպման մեջ այս հիմնական օղակն արդեն այն չի, ինչ վոր եր անցյալ տարի: Մշտական կազմով արտադրական բրիգադաների կազմակերպումը հնարավորություն ե ստեղծում լիովին վոչնչացնել դիմազրկությունը կոլխոզներում, բարձրացնում ե կոլխոզնիկների շահագրգռվածությունը կոլլեկտիվ աշխատանքի արդյունքների հարցում: Կոլխոզային բրիգադաներում հոսունության վոչնչացումն oժանդակում ե կոլխոզային ակտիվի արագ դարբնելուն, կոլխոզնիկների մեջ սիստեմատիկ կուսակցական աշխատանք տանելուն և հետևապես սիստեմատիկ դաստիարակության սոցիալիստական վերաբերմունք ցույց տալու կոլլեկտիվ աշխատանքին և հասարակական ունեցվածքի գործում:

Կոլխոզ — շարժման ասպարեզում կուսակցության բոլոր միջոցառումներով կարմիր թելի պես անցնում ե արտելային ձևի համար մղվող պայքարը:

Կուսակցությունը խստորեն ձիգ տվեց նրանց, ովքեր կոլխոզային գյուղացիության սոցիալիստական վերադաստիարա-

БИБЛИОТЕКА ИНСТИТУТА ВОСТОКОВЕДЕНИЯ Академии Наук СССР

12 JUL 2013

30.733

[illegible] համար մղվող պայքարը փորձեցին փոխարինել չինովնիկական վարչարարությամբ:

Կուսակցությունը ցուցմունք տվեց, որ ներկա էտապի կենտրոնական խնդիրը կայանում է նրանում, որպեսզի ծավալել և ամրացնել կոլխոզների արտելային ձևը: Չհակադրել մենատնտեսությունը համայնականին, այլ կոլխոզային շահերը ճիշտ ներդաշնակել գյուղացի-կոլտնտեսականների անհատական շահերի հետ.—ահա թե ինչ է անհրաժեշտ հետագա հաջողությունների համար:

Կուսակցությունը վճռականորեն ձիգ է տալիս և նրանց, ովքեր մոռանում են այն հասարակ ճշմարտությունը, որ կոլխոզի տերը հանդիսանում է կոլխոզնիկը:

Կոլխոզների հետագա տնտեսական – կազմակերպչական ամրապնդման համար, կոլխոզնիկների յեկամուտի ավելացման և յերկրում ապրանքաշրջանառության արագացման համար մղվող պայքարն oժանդակեց կոլխոզային առևտրի աճմանը: Կոլխոզային առևտուրը դարձավ քաղաքային աշխատավորության մատակարարման լրացուցիչ աղբյուրը: Շատ կոլխոզներ ավելի քան ամրապնդեցին իրենց տնտեսական – ֆինանսական դրությունը: Օրինակ, Հյուսիսային յերկրի Խոլմոգորսկի շրջանի «Լոմոնոսովի» կոլխոզը: Այստեղ 285 հազար ռուբլի ընդհանուր շրջանառու յեկամուտից (անցյալ տարի 171 հազար) կոլխոզային առևտրի յեկամուտը կազմում է 117 հազար ռուբլի: Կոլխոզնիկի աշխատօրվա արժեքն աճել է մի տարվա ընթացքում 2 ռ. 02 կ. մինչև 4 ռ. 40 կոպ. 1932 թ.:

Շրջադարձը դեպի վորակի համար մղվող պայքարը թելադրում է անհրաժեշտ ուշադրություն դարձնել կոլխոզների կազմակերպման խնդիրներին:

Գյուղում անց կացվող յուրաքանչյուր կամպանիա պետք է ընդգրկի այս խնդիրները: Կոլտնտեսությունների կազմակերպչա տնտեսական ամրապնդման մասին հոգատարությունն իր հերթին անմիջապես իրեն զգացնել է տալիս գյուղում այս կամ այն տնտեսական – քաղաքական կամպանիայի ընթացքում:

Ներկա մոմենտում տեղական կուսակցական կազմակերպությունների ուժերը կենտրոնացվում են աշնանային տնտեսա – քաղաքական կամպանիաների հաջող ավարտման վրա:

Հացամթերման պլանի կատարումը հանդիսանում է յուրաքանչյուր սովխոզի, կոլխոզի և մենատնտեսի առաջնակարգ խնդիրը: Նա պարտավորեցնում է բոլոր կուսակցական կազմակերպություններին, ավելի ուժեղացնել ղեկավարությունը հացամթերումների գործում, լայնորեն ծավալել կուսակցական մասսայական աշխատանքը: Բացառիկ նշանակություն է ստանում այն գրույթի բացատրականը, որ ինչքան արագ կատարվի հացի մթերումների տարեկան պլանը, այնքան արագ կոլխոզները և կոլտնտեսականները կիրացնեն տնտեսական տարվա արդյունքները՝ իրենց [illegible] սննդամթերքների և կերային ռեսուրսների վերջնական չափը:



ՀՍՍՌ-Арм ССР
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ
им. А. Мясникяна
60278-67

Տնտեսավարության անցած տարին ցույց տվեց կոլխոզների յեկամուտների աճում ինչպես դրամական, նույնպես և բնական մթերքների արտադրությամբ: Հետևապես կոլխոզները և կոլխոզնիկներն անմիջապես շահագրգռված են այն բանում, որպեսզի ավելի շուտ կատարեն հացամթերումների տարեկան պլանը, ստեղծեն սերմային, կերային ֆոնդեր և վերջնականապես բաշխեն կոլխոզային յեկամուտները:

Ներկայումս տեղական կազմակերպությունների և մամուլի առաջ դրված է այս գրույթը լայնորեն հանրամատչելի դարձնելու խնդիրը:

Խոշորագույն նշանակություն ունի կոլխոզների և կոլխոզնիկների հացամթերումների տարեկան պլանը կատարելուց հետո յեկամուտների բաշխումից ստացած յեկամուտի ցուցահանումը: Պրոլետարական պետության առաջ պարտավորությունների կատարումից հետո յեկամուտների անմիջական բաժանումը, այդ աշխատանքի արդյունքի ցուցահանումը կործանիչ հարված կհասցնի կուլակին, վորը ձգտում է ասել այն մասին, որ իբր թե կոլխոզնիկը դեպի հարվածային աշխատանքը ստիմուլ չունի:

Միանգամայն ակներև է, որ պրոլետարիատի ղեկավարչական ազդեցության խնդիրը կոլխոզային գյուղացիության նկատմամբ չի կարող սահմանափակվել արտադրության կազմակերպումով: Միայն մթերքների հետևողական բաշխումով կամրապնդվեն արտադրության կազմակերպման հաջողությունները:

Նրանք, ովքեր չեն հասկանում այս ճշմարտությունը և շարունակում են կոլխոզների նկատմամբ վարչարարություն, պետք է հանդիպեն ուժեղ հակահարվածի, որպես կոլխոզային շարժման չարանենգ թշնամիներ:

Կուսակցության միջոցառումներն անպայման oժանդակեցին կոլխոզնիկի մեջ տեր լինելու զգացմունքի աճմանը:

Սա նշանակում է, որ կոլխոզնիկն ավելի հաճախ կհետևի կոլխոզների ղեկավարության վրիպումներին և բացերին: Սա նշանակում է, որ կոլխոզների ղեկավարության խնդիրը դժվարացել է: Սա վերջապես ամբողջ հրամայողականությամբ պահանջում է յեկամուտների բաշխման կամպանիայի բացառիկ ճիշտ և կոնկրետ ղեկավարություն, յուրաքանչյուր յերկրի առանձնահատկությունների հաշվետումով, կոլխոզնիկի – արտադրողի նկատմամբ զգոն վերաբերմունքի ապահովումով:

ԱՌԱՋԻՆ. — Պրոլետարական պետության առաջ պարտավորությունների առաջին հերթին կատարումը —յեկամուտների բաշխման վողջ կամպանիայի հաջողության կարևորագույն պայմանն է:

Կոլխոզներում յեկամուտների ճիշտ բաշխումը պայմանավորվում է առնվազը հետևյալ յերեք խնդիրների հաջող լուծումով:

Չի խանգարի հիշել Միջին Վոլգայի կուսակցական կազմակերպության լավագույն փորձը, վորը համառորեն ձգտում է, վորպեսզի յեկամուտների բաշխման կամպանիան խթան դառնա հացամթերումների արագ ավարտմանը:

Հացամթերումների տարեկան պլանն ավարտած կոլխոզներն անցնում են յեկամուտների վերջնական բաշխմանը. օրինակ՝ Բոլշեգլուշիցկի շրջանի «Յերկրորդ հնգամյակ» կոլխոզը: Կոլխոզը լրիվին կատարել է հացամթերումների տարեկան պլանը և արդեն բաժանել է հացի ⅔ մասը: Սրանից հետո կոլխոզում չափազանց բարձրացավ աշխատանքի արտադրողականությունը, հաջողությամբ վերջացված է աշնանացանը, բարձրացել են աշխատավարի սեմպերը, կատարված են ֆինանսական վճարումները:

Տեղական կուս. կազմակերպությունների խնդիրը — լայնորեն օգտագործել հացամթերումներն ավարտած կոլխոզներում յեկամուտների բաշխման կամպանիան մյուս կոլխոզներում հացի համար մղվող պայքարը խթանելու համար:

ՅԵՐԿՐՈՐԴ.—Յեկամուտների ճիշտ բաշխումը պետք է ապահովի կոլխոզային արտադրության արտադրողականության բարձրացումը և հասարակական տնտեսության հետագա աճը:

Սա կարելի կլինի ապահովել միայն կոլխոզային արտադրության մեջ հավասարեցման դեմ ուժեղ պայքար մղելու դեպքում: Կոլխոզնիկը դեռ ևս սոցիալիստ չէ: Նա կոլխոզ է բերել սերընդից սերունդ դաստիարակված սովորություններ ու տրամադրություններ: Այս բանը ճարպկորեն օգտագործվում է թշնամական տարրերի կողմից, վորոնք ձգտում են կոլխոզնիկների հետամնաց մասի միջոցով քաշել կոլխոզը մանր բուրժուական հավասարեցման ճանապարհի վրա (շնչային սիստեմ, պայոկներ և այլն):

Մի՞թե կարող է կասկած լինել այն բանում, վոր յեկամուտների բաշխման մեջ հավասարեցումը խանգարում է կոլխոզային արտադրության աճմանը: Ի՞նչ շահագրգռվածություն կարող է լինել կոլեկտիվ արտադրության մեջ, յերբ առաջնակարգ հարվածային-կոլխոզնիկը ստանում է այնպիսի յեկամուտ, ինչպես ծույլը և դզլողը:

Կուսակցությունը չի սահմանափակվում նրանով, վոր համառորեն պայքարում է, վորպեսզի յեկամուտները բաշխվեն ըստ աշխատօրի: Կուսակցությունը ցուցմունք տվեց՝ կոլխոզային բրիգադներին իրենց աշխատանքների հանրագումարի համեմատությամբ աշխատօրերի տարբեր գնահատականներ սահմանելու մասին: Դժբախտաբար իր նշանակությամբ բացառիկ՝ Կենտկոմի այս ցուցմունքը տեղերում դեռ ևս թույլ է յուրացվում: Շատ կոլխոզներում ավանսավորումը բոլոր բրիգադների համար անց է կացված միօրինակ: Աշխօրվա համար տրվող ավանսի քանակը հաճախ միևնույնն է յեղել ամբողջ կոլխոզի համար (Հյուսիսային Կովկաս): Այնտեղ, վորտեղ բնական մթերքներով ավանսավորման ընթացքում կոլխոզային բրիգադները զգացին իրենց աշխատանքի վորակի ավելի բարձր արդյունքները, այնտեղ աճեց արտադրական ակտիվությունը: Յուրաքանչյուր կոլխոզնիկի մեջ աճում է հոգատարությունը վողջ բրիգադայի աշխատանքի նկատմամբ: Կոլխոզնիկը զգաց, վոր ամբողջ բրիգադայի լավ աշխատանքով կփոխվի իր աշխատանքի արդյունքի գնահատումը:

Սա իր նշանակությամբ կոլխոզնիկի սոցիալիստական դաստիարակության բացառիկ ֆակտորը չէ՞ արդյոք:

Կոլխոզներում յեկամուտների բաշխումը պետք է ապահովի հասարակական տնտեսության այնպիսի աճում, վորպեսզի կոլխոզնիկի ընդհանուր յեկամտի մեջ կոլեկտիվ արտադրության յեկամտի բաժինը սիստեմատիկորեն բարձրանա:

Կուսակցական կազմակերպությունները պետք է անշեղորեն կենսագործեն Կենտկոմի և Ժողկոմխորհի դիրեկտիվը. —«Բերքահավաքի, հացամթերումների և կոլխոզում յեկամուտների բաշխման ժամանակ անհրաժեշտ է ապահովել այնպիսի դրություն, վոր լավ ցանած, պարտաճանաչ կերպով բերքը հավաքած, պետական մթերումների՝ իրենց համար սահմանված պլաններն կատարած կոլխոզներն ունենան համապատասխան իրենց արտադրության խոշոր քանակությամբ հաց, սեփական կարիքների համար»:

ՅԵՐՐՈՐԴ.—Այն բոլորը, ինչ վոր իջեցնում է աշխ. օրվա չափը, պետք է վճռականորեն վերացվի, միաժամանակ պետության առաջ պարտավորությունների կատարելու հետ միասին:

Անցյալ տարվա դասերը պետք է հաշվի առնվեն լրիվին:
Կարելի յե բերել շատ օրինակներ, մի շարք կոլխոզների պրակտիկայից, յերբ անցյալ տարի շրջանաստ յեկամուտի շոշափելի աճման հետ միասին, կոլխոզնիկների աշխ. օրերի վարձատրությունն իջել է:

Սա հետևանք եր մի շարք պատճառների — ադմինիստրատիվ – վարչական ծախսերի ուռճեցումը, կապիտալ ներդրումների անչափ աճումը, կոլխոզի ֆինանսական տնտեսությունը տանելու անխտեսմությունը, աշխ–օրերի, արտադրանքի, գողության, ճիշտ հաշվառքի բացակայությունը:

Այստեղից խնդիր. — յեկամուտների բաշխումն անց կացնել վորպես լայն մասսայական կամպանիա, յեկամուտների բաշխման բոլոր պլանները կոլխոզնիկների կողմից քննելով: Կոլխոզնիկն արդեն գիտե աշխ. օրվա նշանակությունը, կոլխոզնիկն արդեն գիտե ինչից է կախված նրա նյութական բարեկեցությունը: Անհրաժեշտ է միայն կազմակերպել մասսաները, մոբիլիզացիայի յենթարկել կոլխոզնիկներին, պետության առաջ պարտավորությունների կատարման ուղղությամբ: Այս կամպանիայի հաջող անցկացումը նոր հարված կհասցնի կուլակության և նրա ամեն տեսակի ագենտներին:

Բնական մթերքներով ավանսավորումը զգալի չափով աճեցրեց կոլխոզներում բերքահավաքի աշխատանքի տեմպերը:
Յեկամուտների բոլշևիկյան բաշխումը կոճանդակի կոլխոզային արտադրության հետագա վերելքին:

# 1932 Թ. ԲԵՐՔԱՀԱՎԱՔԻ ԿԱՄՊԱՆԻԱՅԻ ՄԱՍԻՆ

## ԽՍՀՄ ԺՈՂԿՈՄԽՈՐՀԻ ՅԵՎ ՀԿԿ (Բ) ԿԵՆՏԿՈՄԻ ՎՈՐՈՇՈՒՄԸ

Գյուղատնտեսության մեջ կոլխոզների և սովխոզների լիակատար հաղթանակը, վորոնք ընթացիկ տարվա ցանքային կամպանիայի հանրագումարի մեջ գրավեցին ամբողջ գարնանացանի տարածության 4/5-ը, վկայում է այն մասին, վոր Խորհրդային Միությունը վերջնականապես հաստատվեց նոր սոցիալիստական ճանապարհի վրա: ԽՍՀՄ դեպի կապիտալիզմ վերադառնալու բուրժուական թեորիան հենց դրանով վերջնականապես ջախջախված ու ցիր ու ցան է արված:

Կոլխոզնիկների կուտակվող փորձը, կոլխոզների աճումը, նրանց գարնանային ցանքերի կեսից ավելին մեքենա — տրակտորային կայանների կողմից ընդգրկումը, սովխոզների ամրապնդումը և կոլխոզային առևտրի ծավալումը ստեղծում են ներկա տարվա բերքահավաքի գործի՝ վորը հանդիսանում է գյուղատնտեսական աշխատանքների անհամեմատ ավելի դժվար և պատասխանատու մասը — նշանակալից բարելավման հնարավորություններ:

Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդը և կուսակցության Կենտրոնական Կոմիտեն առաջարկում են բոլոր խորհրդային, կուսակցական կազմակերպություններին, ավելի մեծ չափով, քան այդ գոյություն ուներ ցանքային կամպանիայի ժամանակ, կենտրոնացնել վողջ ուշադրությունը և ուժերը բերքահավաքի աշխատանքների վրա, վորպես ամբողջ գյուղատնտեսական տարվա արդյունքները վորոշող կամպանիայի և սրա հետ միասին, գործնականում ուժեղացնել գյուղատնտեսական հարցերին նվիրվող ուշադրությունը:

Առաջիկա բերքահավաքի կամպանիայի ընթացքում անհրաժեշտ է կենտրոնացնել բոլոր ուժերն անցյալ բերքահավաքի կամպանիայի ժամանակ գոյություն ունեցող արմատական թերությունները վերացնելու վրա, — այսինքն, հացահատիկների, բազուկի և մյուս տեխնիկական կուլտուրաների խոշոր կորուստների, բերքահավաքի ձգձգման, տրակտորային և ձիերի պարկերի վատ կազմակերպման, աշխատանքի անբավարար կազմակերպման և, այսպես կոչված «կոնվեյերնի» սիստեմի կիրառման ու խրձով հացի դիզելուց հրաժարվելու վրա:

Ժողկոմխորհը և Կենտրոնական Կոմիտեն հատուկ ուշադրություն են դարձնում հացահատիկների բերքահավաքի հետ միասին շաքարի բազուկի, բամբակի, արևածաղկի, ծխախոտի, վուշի, կանեփի բերքահավաքի վրա և պահանջում են թույլ չտալ



անցյալ տարվա սխալները շաքարի բազուկի հանելու և տեղափոխելու գործում:

Կարևորագույն խնդիրներ, վորոնց լուծման վրա պետք է կենտրոնացվի խորհրդային և կուսակցական կազմակերպությունների ուշադրությունը, Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդը և կուսակցության Կենտրոնական Կոմիտեն համարում են հետևյալները. —

1. Բերքահավաքի աշխատանքների մեջ կենտրոնական տեղ պետք է գրավի կորուստների դեմ մղվող պայքարը: Կորուստների դեմ պայքարելու գործում վճռական միջոցներից է բերքահավաքի անցկացումը, վորքան հնարավոր է կարճ ժամանակում, վոչ միայն բարդ, այլ և հասարակ մեքենաների, գործիքների լիակատար ոգտագործման հիման վրա, հացահատիկների բոլոր ցրված խուրձերը պարտադիր և անմիջական դիզելու, նրա արագ կալսման հետ միասին: Միաժամանակ անհրաժեշտ է համապատասխան միջոցներ ձեռք առնել, վորպեսզի բերքը պաշտպանվի գողանալուց, մաքուր կալսվի, բերքի խիստ հաշվառք սահմանվի, ծղոտների հարելը կազմակերպվի, հատիկավորոններ գործադրվեն և այլն:

2. Աշխատանքի կազմակերպումը կոլխոզներում պետք է ապահովի ավելի մեծ չափով, քան այդ տեղի է ունեցել, ինչպես յուրաքանչյուր բրիգադայի, նույնպես և առանձին կոլխոզնիկների անմիջական շահագրգռվածությունն իրենց աշխատանքի արդյունքի նկատմամբ:

Սրան համապատասխան պետք է ամենուրեք, բոլոր կոլխոզներում ապահոված լինեն գործավարձի բրիգադային (խմբական) մեթոդները, այնպես, վոր բրիգադայի աշխատանքի վորակի համեմատությամբ (կորուստների քանակը, բերքահավաքի ժամկետները, հացի կալսելը և տեղափոխելը, տեխնիկական կուլտուրաների ծեծելն ու տեղափոխությունը, աշխատօրվա արժեքային գնահատումը, կամ աշխատած աշխ-որերի քանակը) բրիգադայի կամ բրիգադիրի համար կոլխոզի վարչության կողմից բարձրացվի կամ իջեցվի 10-ից մինչև 20 % սահմաններում:

3. Կոլխոզներում ամբողջ յեկամտի բնական կամ դրամական մասերի բաշխումը կատարվում է յուրաքանչյուր կոլխոզնիկի կողմից աշխատած աշխատանքային որերի քանակի իսկական համեմատությամբ:

Անասունների կերի բաշխման ժամանակ պետք է հաշվի առնել կոլխոզնիկների մոտ յեղած անասունների քանակը, այնպես, վոր տվյալ կոլխոզի համար սահմանված բնական պրոդուկցիայի բաշխումների քանակի սահմաններից չանցնելով, կեր չստացող կամ պակաս ստացող կոլխոզնիկները սրա փոխարեն ստանան բնական արտ. ապրանքի ուրիշ տեսակներ:

Սրա հետ միասին անհրաժեշտ է փոխել անցյալ տարվա պրակտիկայում տեղի ունեցած գյուղատնտեսական արտադրության մեջ աշխատող և վորոշված քանակությունից ավելի աշխատանքի որ ունեցող կոլխոզնիկներին յեկամուտի բնական մասը բաժանելու սահմանափակումները, այնպես վոր այդ ձևով լա-

վաղույն կոլխոզնիկն ապահովվի ինչպես արդյունքի դրամական, նույնպես և բնական մասերով:

4. Անհրաժեշտ է արդեն իսկ կալսելու պրոցեսում անց կացնել կոլխոզնիկներին ավանս տալը, ի հաշիվ յեկամուտի բնական մասի, փաստորեն կալսվող հացի 10–15%-ի չափով, այնպես, վոր այս ավանսի, ինչպես նաև ամբողջ յեկամտի բաշխումը կատարվի միմիայն աշխատանքային օրերի համաձայն:

Վաղ հացահատիկային կուլտուրաների պետական մթերումների սահմանված պլանի համաձայն արտադրանքի հանձնումները վերջացնելուց, սերմացուների ֆոնդերի առանձնացումից հետո, առանց վորևե ձգձգման կոլխոզի վարչության կողմից կոլխոզնիկներին պետք է տրվի իրենց հասանելիք սնդի և կերի հացահատիկների մնացած մասը:

Սրա կապակցությամբ, կոլտնտեսությունների և ռայոնների (Հյուսիսային Կովկասում և մյուս ռայոններում) փորձի համաձայն, այն կոլխոզներում, վորտեղ հենց իր, կոլխոզի տեսակետով անհրաժեշտ կհամարվի անցկացնել ավանսների բաց թողնելը ի հաշիվ յեկամուտի բնական մասի 15–20%-ի սահմաններում այն արտադրանքներից, վորոնք յենթակա են կոլխոզնիկների մեջ բաշխելուն:

5. Անհրաժեշտ է վերացնել անցյալ տարի մի շարք շրջանների պրակտիկայում տեղի ունեցած մինչև յեկամուտի վերջնական բաշխումը յեկամտի փողային մասի բաշխման ձգձգումները և գործնականում մտցնել այնպիսի կանոն, վոր դրամի հիմնական մասը, վորը կոլխոզները ստանում են հանձնված (վաճառված) արտադրանքի դիմաց, տրվի վորպես ավանս նրանց աշխատանքային օրերի քանակի համապատասխան:

6. ԺԿԽ և Կենտկոմը գտնում են անթույլատրելի աշխատանքային օրվա համար տրվող բնական արտադրանքի քանակը փոքրացնելու գործում անցյալ տարվա պրակտիկայում տեղի ունեցող հավասարեցման վերաբերմունքի փաստերի կրկնությունն այս տարվա ընթացքում, վորոնց հետևանքով անցյալ տարի առանց կոլտնտեսությունների վորակը և արդյունքը հաշվի առնելու տարբեր կոլխոզնիկների աշխատանքային օրերի համար տրվեց հացի միատեսակ քանաքություն: Բերքահավաքի, հացամթերման և կոլխոզում բերքի բաշխման անցկացման ժամանակ անհրաժեշտ է ապահովել այնպիսի դրություն, վորպեսզի այն կոլխոզները, վորոնք լավ են ցանել և պարտաճանաչությամբ հավաքել բերքն ու կատարել իրենց համար սահմանված պետական մթերումների պլանը—սեփական մթերքների համար իրենց տրամադրության տակ ունենան հացի ավելի շատ քանակություն:

7. Ներկա բերքահավաքի կամպանիայում սովխոզները և կոլխոզները տեխնիկապես զինելու համար առանց հապաղման բաց թողնել կոլխոզներին և սովխոզներին 19,100 հատ տրակտոր, 6,700 ավտոմոբիլ, 170 միլիոն ռուբլու արժողությամբ հավաքող մեքենաներ, այդ թվում 8,500 կոմբայն, տրակտորների պահեստային մասեր 40 միլիոն ռուբլու արժողությամբ, տրակտորների և մեքենաների նորոգության համար 12·000 տոնն տեսակավոր մետաղ և անիվների համար 12·000 տոնն յերկաթ:



Սրա հետ միասին բոլոր տեղական, խորհրդային և կուսակցական մարմինների կողմից պետք է նվիրվի հատուկ ուշադրություն տրակտորային, մեքենաների պարկերի վերանորոգությանը և բերքահավաքի համար ձիերի պատրաստելուն: Գործնականում պետք է ապահովվի տրակտորային պարկերի և հավաքող մեքենաների աշխատանքի իրական բարելավումը և վերջինների կոտրտելու վերացումը:

Պահեստային մասերի սուր դեֆիցիտի և նրանց անհրաժեշտ քանակությունը համակենտրոնացած ձևով արտադրելու հնարավորություն չլինելու կապակցությամբ՝ տրակտորների պահեստային մասերի արտադրելու համար պետք է մոբիլիզացիայի յենթարկվեն բոլոր տեղական ռեսուրսները:

8. Զմիջամտելով կոլխոզներին կից մեքենա – տրակտորային կայանների և սովխոզների ընթացիկ օպերատիվ աշխատանքներին, տեղական խորհրդային և կուսակցական կազմակերպությունները միաժամանակ պետք է ապահովեն սովխոզների և մեքենա-տրակտորային կայանների դիրեկտորներին ամենօրյա և իրական ոգնությունը և նրանց աշխատանքների վրա հսկողությունը, ինկատի ունենալով, վոր բերքահավաքի աշխատանքների և աշնանացանի կամպանիայի ընթացքի համար սովխոզների և մեքենա տրակտորային կայանների դիրեկտորների հետ միասին պատասխանատու են նաև տեղական խորհրդային և կուսակցական կազմակերպությունները:

9. ԽՍՀՄ Ժողկոմխորհը և կուսակցության Կենտրոնական Կոմիտեն ավտո – տրակտորային, ավտոմոբիլային և գյուղատնտեսական մեքենաշինարարության, ինչպես նաև տրակտորների պահեստային մասեր արտադրող գործարանների դիրեկտորների ուշադրությունը հրավիրում են այն բանի վրա, վոր բերքահավաքի կամպանիայի հաջողությունները նշանավոր չափով կախված են իրենց աշխատանքներից և առաջարկում են վերոհիշյալներին իր ժամանակին, լրիվ ապահովել կառավարության կողմից սահմանված արտադրական ծրագրերի կատարումը:

10. Բերքահավաքի հաջող անցկացումը կախված է այդ աշխատանքների կազմակերպվածության աստիճանից: ԽՍՀՄ Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդը և կուսակցության Կենտկոմը առաջարկում են ԽՍՀՄ Հողժողկոմին հենվելով կոլխոզների կուտակված փորձի և մեքենա – տրակտորային կայանների ու սովխոզների աճող դերի վրա, ճիշտ նույն ձևով, ինչպես ցանքսային կամպանիայի ժամանակ, սահմանել բերքահավաքի կամպանիայի օպերատիվ ղեկավարության անցկացումն ըստ ռայոնների, ըստ առանձին կուլտուրաների, հաճախակի հրապարակելով ըստ ռայոնների, ըստ կուլտուրաների բերքահավաքի, արտադրանքի դիզելու և տեղափոխության, ինչպես նաև աշնանացանի և հերկի ընթացքի մասին տեղեկություններ:

ԽՍՀՄ Ժողկոմխորհի նախագահ՝ Վ. ՄՈԼՈՏՈՎ
(ՍԿՐՅԱԲԻՆ)

Համ. ԿԿ (բ) Կենտկոմի քարտուղար՝ Ի. ՍՏԱԼԻՆ

# ԿՈԼԽՈԶՆԵՐՈՒՄ 1932 Թ. ՅԵԿԱՄՈՒՏԻ ԲԱՇԽՄԱՆ ՄԱՍԻՆ

## ԽՍՀՄ ՀՈՂԺՈՂԿՈՄԱՏԻ ՅԵՎ ԽՍՀՄ ՈՒ ՌՍՖԽՀ ԿՈԼԽՈԶԿԵՆՏՐՈՆԻ 1932 ԹՎԻ ՀՈՒԼԻՍԻ 11-Ի ՎՈՐՈՇՈՒՄԸ

1. Կոլխոզի բնական և դրամական յեկամուտի բաշխումը պիտի կատարվի ըստ յուրաքանչյուր կոլխոզնիկի կողմից աշխատած աշխորերի:

2. Բացի կոլխոզի դրամական պարտքերից, գյուղհարկից և ապահովագրական վճարումներից և անբաժանելի ֆոնդի համալրումներից կոլխոզնիկների մեջ բաշխվելու յենթակա է կոլխոզի դրամական վողջ յեկամուտը:

3. Կոլխոզներում անբաժանելի ֆոնդերը կազմվում են ամբողջ կոլխոզի յեկամուտի 10–15 տոկոսի չափով, հանելով ամբողջ յեկամուտից 1932 թ. վճարման յենթակա կոլխոզի պարտավորությունների՝ գյուղ. հարկի և սերմային ու կերային ֆոնդերի ապահովագրական վճարումները:

Կոլխոզնիկի կողմից կատարված կապիտալ ներդրումների դրամական ծախսերը (շինարարություն, անասունների և ինվենտարի գնումն և այլն) 1932 թվի ընթացքում անց է կացվում 10–15 տոկոս անբաժանելի ֆոնդի հաշվից:

4. Թույլ չտալ մինչև յեկամուտի վերջնական բաշխումը դրամական յեկամուտի կոլխոզնիկներին բաշխելու ձգձգումները, սահմանելով այնպիսի կարգ, վորպեսզի կոլխոզի կողմից արտադրանքի հանձնման (վաճառման) դիմաց ստացած դրամական հիմնական մասը բաժանվի կոլխոզնիկներին, նրանց աշխատած աշխորերի քանակի համաձայն, ավանսի կարգով:

5. Վաղ հացահատիկային կուլտուրաների մթերման պլանի համաձայն հանձնումները կատարելուց, սերմնային և կերային ֆոնդերի առանձնացումից հետո՝ մյուս մնացած մնդամթերքի և կերի հացահատիկային հասանելիք մասը կոլխոզի վարչության կողմից առանց վորևէ հապաղման բաժանվում է կոլտնտեսականների միջև: Դաշտային աշխատանքների մեջ գտնվող կոլտնտեսականների արտեներով կերակրվելու մթերավորման ֆոնդի ստեղծելու, ինչպես նաև նրա քանակի և կազմակերպման հարցը լուծվում է կոլտնտեսականների ընդհանուր ժողովում:

6. Կալսելու ժամանակ բնական յեկամուտի հաշվին կոլտնտեսականներին ավանսավորել փաստորեն կալսված հացահատիկի 10—20 տոկոսի չափով:

Այն կոլխոզներում, ուր կոլխոզներն անհրաժեշտ կհամարեն բնական ավանս բաց թողնելը կոլտնտեսականներին՝ բնական յեկամուտի հաշվին կոլտնտեսականների միջև բաշխման յենթակա արտադրանքի 15–20 տոկոսի չափով:

7. Համեմատաբար շատ աշխատանքի օրեր ունեցող լավագույն կոլտնտեսականները պետք է ստանան խոշոր քանակությամբ յեկամուտի՝ ինչպես բնական, նույնպես և դրամական մասից: Սրա հետ կապված վերացնել գյուղատնտեսության մեջ աշխատող կոլտնտեսականներին տրվող անցյալ տարվա պրակտիկայում տեղ գտած բնական յեկամուտի սահմանափակումները:

8. «Կերի բաշխման ժամանակ պետք է նկատի ունենալ կոլտնտեսականների մոտ յեղած անասունների քանակը այն հաշվով, վոր կեր չստացող կամ ավելի քիչ ստացողները սրա դիմաց ստանան բնական արտադրանքի մյուս տեսակներ, այնուամենայնիվ չանցնելով տվյալ կոլխոզում աշխատանքային օրվան տրվող բնական հատուցումների սահմանված քանակից» (Համ. Կկ (բ) ԿԿ-ի և ԽՍՀՄ Ժողկոմխորհի վորոշումը):

9. Կոլխոզների վարչա – ղեկավարչական կազմն անկախ նրանց հասանելիք աշխատանքային օրերի քանակից, չպետք է ստանան բնական արտադրանքի այն քանակությունից ավելի, վորը ստանում է տվյալ կոլխոզում միջակ բրիգադայում աշխատող և ամբողջ տարվա ընթացքում իրեն հանձնարարված աշխատանքները պարտաճանաչ կատարող կոլտնտեսականը:

10. Ինչպես բնական, նույնպես և դրամական յեկամուտի վերջնական բաշխումը կոլտնտեսականների միջև պիտի վերջացվի վոչ ուշ, քան 1933 թ. փետրվարի 1-ը: Կոլխոզների վողջ հաշվետվությունը և աշխորերի հաշվառքը, ինչպես նաև յեկամուտների բաշխումը կատարվում է օրացուցային տարվա ընթացքում հունվարի 1-ից մինչև հունվարի 1-ը:

11. Պարտավորեցնել կոլխոզների վարչություններին, բրիգադիրներին բերքահավաքի կամպանիայի ընթացքում ամենամանրակրկիտ կերպով անցկացնել կոլտնտեսականների աշխորերի հաշվառքը և նրանց գրանցումը աշխատանքային գրքույկներում:

12. ԽՍՀՄ Հողժողկոմատը և ԽՍՀՄ ու ՌՍՖԽՀ Կոլխոզկենտրոնը պարտավորեցնում են կոլխոզների վարչություններին հունիսի ընթացքում անցկացնել կոլտնտեսականների աշխատանքային օրերի հաշվառքի ցուցակագրման և նրանց աշխ-գրքույկներում գրանցման ստուգումն՝ ու ստուգումը կատարելու օրը:

13. Բրիգադիրների կողմից բերքահավաքի վողջ աշխատանքների ավարտումից հետո կոլխոզների վարչությունները պետք է կատարեն յուրաքանչյուր բրիգադայի աշխատանքի վորակի գնահատումը ինչպես գարնանացանի և միջաշարք մշակման, նույնպես և բերքահավաքի բնագավառում և ըստ բրիգադների աշխատանքների (բերքատվությունը բարձրացնելու հաջողությունը, խոտհնձելու և կալսելու մաքրությունը, բերքահավաքի և հացի տեղափոխության ժամկետները, հացահատիկը փչացումներից պաշտպանելը) բարձրացնել կամ իջեցնել աշխատանքային օրերի գնահատությունը կամ բրիգադայի ու բրիգադիրների աշխատանքային օրերը 10-ից մինչև 20 տոկոսի սահմաններում:

Միության Հողժողկոմատը և ԽՍՀՄ ու ՌՍՖԽՀ Կոլխոզկենտրոնը պարտավորեցնում են բոլոր հողային և կոլտնտեսական

մարմիններին ԽՍՀՄ-ի Ժողկոմխորհի և Համ. ԿԿ (բ) Կենտկոմի հուլիսի 5-ի վորոշումների հիման վրա կոլտնտեսական վողջ մասսայի մեջ տանել լայն բացատրական աշխատանք, հասնելով այն բանին, վոր այս բոլոր վորոշումները կարճ ժամանակվա ընթացքում քննված լինեն կոլտնտեսականների լայն ժողովներում։

Այս նպատակով, բերքահավաքի կամպանիայի անցկացման, հացամթերումների պլանների կատարման և յեկամուտի բաշխման ժամանակ կոլխոզներին ոգնություն ցույց տալու համար հողային և կոլտնտեսական մարմինները պարտավոր են գործուղել շրջանները և կոլխոզները հրահանգչական, հաշվետարական և գյուղատնտեսական պերսոնալ։

ԽՍՀՄ Հողժողկոմի տեղակալ՝ Ա. ՄԱՐԿԵՎԻՉ

ԽՍՀՄ և ՌՍՖԽՀ Կոլխոզկենտրոնի նախագահ՝ Ի. ՏԱՏԱՅԵՎ



# 1932 Թ. ԱՍԽՀ ԿՈԼԽՈԶՆԵՐՈՒՄ ԲԵՐՔԻ ՀԱՎԱՔՄԱՆ ՅԵՎ ՅԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԲԱՇԽՄԱՆ ՄԱՍԻՆ

## ԱՍԽՀ ՀՈՂԺՈՂԿՈՄԱՏԻ ՅԵՎ ԿՈԼԽՈԶՑԵՆՏՐԻ 1932 ԹՎԻ ՀՈՒԼԻՍԻ 19-Ի ՎՈՐՈՇՈՒՄԸ

«Գյուղատնտեսության մեջ կոլխոզների և սովխոզների լիակատար հաղթանակը, վորոնք ընթացիկ տարվա ցանքսային կամպանիայի հանրագումարի մեջ գրավեցին վողջ գարնանացանի տարածության չորս հինգերորդական մասը, վկայում է այն մասին, վոր խորհրդային Միությունը վերջնականապես հաստատվեց նոր սոցիալիստական ճանապարհի վրա» (ԽՍՀՄ ԺԿԽ-ի և ՀԱՄ. ԿԿ-ի 1932 թ. հուլիսի 5-ի վորոշումից)։

Կուսակցության գլխավոր գծի կիրառման հիման վրա, բամբակի անկախության համար, ԱՍԽՀ-ի կոլխոզների կազմակերպչա-տնտեսական ամրապնդման համար մղած պայքարում, կուլակության և նրա ագենտուրայի դեմ սուր պայքարի պայմաններում 1932 թ. ԱՍԽՀ գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման գործում ձեռք են բերված խոշոր նվաճումներ։

Կոլխոզների կողմից ընդգրկված է գարնանային վարելահողերի ամբողջ տարածության 65 տոկոսը և Ադրբեջանի գլխավոր կուլտուրայի՝ բամբակի 80 տոկոսը։ Բամբակի ցանքը անց է կացրված անհամեմատ կարճ ժամանակամիջոցում (22 որ. 1931 թվի 34 որվա փոխարեն) շոշափելի չափով բարձրացել է կոլխոզների և առանձին կոլտնտեսականների աշխատանքի արտադրողականությունը, ամրացել են սովխոզները և կոլխոզների մեքենայացած բազան (մեքենա-տրակտորային կայանների թիվը 31 թ. 19-ից բարձրացել է 1932 թ. մինչև 28-ի)։ Այս նվաճումները, կոլխոզների և կոլխոզնիկների կուտակված փորձը, կոլխոզային ակտիվի ընդարձակումը և կոլխոզների կազմակերպված տնտեսական վիճակի բարելավումը պայմաններ են ստեղծում անհամեմատ ավելի կարճ ժամկետում և համեմատաբար քիչ կորուստներով տեխնիկական և հացահատիկային կուլտուրաների բերքահավաքի անցկացման համար։ Սրան համապատասխան Հողժողկոմատը և Կոլխոզկենտրոնը պարտավորեցնում են հողային և կոլտնտեսական մարմիններին մոբիլիզացիայի յենթարկել գյուղատնտեսական աշխատանքների անհամեմատ ավելի պատասխանատու մասը հանդիսացող բերքահավաքի կամպանիայի շուրջը վողջ կոլտնտեսական, չքավոր — միջակային գյուղացիական մասսաների ուշադրությունը և գործնականում ցույց տալ կուսակցու-

թյան և կառավարության վորոշումները կատարելու կարողությունը։

ԱՍԽՀ պայմաններում բերքահավաքի հիմնական և վճռական խնդիրը հանդիսանում է բամբակի բերքի հավաքը։ Այս գլխավոր խնդրի արագ անցկացման, ինչպես նաև մյուս կուլտուրաների բերքահավաքի համար Հողժողկոմատը և Կոլխոզկենտրոնը բոլոր հողային և կոլտնտեսական մարմինների, վողջ կոլտնտեսական մասսայի ուշադրությունը կենտրոնացնում են հետևյալ միջոցառումների վրա. —

1) Բերքի կորուստների դեմ պայքարի կազմակերպումը (բամբակ և մյուս հացահատիկային կուլտուրաներ), բերքահավաքի և հացահատիկային կուլտուրաների կալման մաքսիմալ մեքենայացման, բերքահավաքը հնարավոր չափով կարճ ժամանակամիջոցում անց կացնելու և մեքենայական ու կենդանի քարշուժերի ճիշտ համադրման ճանապարհով, այնպես, վոր հնարավոր լինի ազատված բանվորական ուժն ուղղել բամբակի և մյուս տեխնիկական կուլտուրաների հավաքման և մշակման ուղղությամբ։

2) Կոլխոզների կողմից հացամթերումների պլանի կարճ ժամկետում կատարումը ու կոլխոզային առևտրի և շրջանառության արագացման ապահովումը։ Սրա հետ միասին Հողժողկոմատը և Կոլխոզկենտրոնը անհրաժեշտ են համարում, վարչարարության դեմ պայքարելու նպատակով՝ հացամթերումների պլանների ընդունումը և կոլխոզներին հասցնելը յուրաքանչյուր առանձին կոլխոզի ներկայացուցչի պարտադիր մասնակցությամբ։

3) Համ. Կկ (բ) Կենտկոմի 1932 թ. փետրվարի 4-ի «Կոլխոզների կազմակերպչական – տնտեսական ամրապնդման ասպարիզում հերթական միջոցառումների մասին» վորոշումների կենսագործման ստուգումը, մշտական կազմով արտադրական բրիգադաների կազմակերպումն այնպես, վոր ուղղվեն բոլոր բաց թողնված սխալներն այս հարցում և ապահովել բամբակի և մյուս կուլտուրաների բերքահավաքը բրիգադաներով այն ցանքային շրջաններում, վորտեղ հենց այդ բրիգադաների կողմից անց է կացված ցանքը և մշակումը (բերքահավաքի ժամկետի մաքսիմալ կրճատումը, աշխատանքային նորմաների վերանայումը, բերքահավաքի անցկացման օրացուցային ծրագրերի կազմումը, արտադրական պլանները մինչև բրիգադաները հասցնելը և այլն)։

4) Աշխատանքի ճիշտ կազմակերպումը, բրիգադաների մեջ ուժերի դասավորումը, կատարված աշխատանքի վորակային և քանակային հաշվառքը, ԱՍԽՀ բոլոր կոլխոզներում պետք է ապահովեն բրիգադաների և առանձին կոլտնտեսականների իրենց աշխատանքի արդյունքներով ավելի շատ շահագրգռվելը այն հաշվով, վորպեսզի բրիգադայի աշխատանքի վորակի համեմատությամբ (կորուստների քանակը, բերքահավաքի ժամկետները. հացի և տեխ. կուլտուրաների կալսելը, ծեծելն ու տեղափոխությունը) բրիգադայի և բրիգադիրի աշխատանքային օրերի վարձատրությունը կոլխոզի վարչության կողմից բարձրացվի կամ իջեցվի 10-ից մինչև 20 տոկոսի սահմաններում։

5) Բրիգադային (խմբական) գործավարձի կիրառումը բերքահավաքի և բերքի կալսելու բոլոր աշխատանքներում կոլխոզնե-



ների աշխատանքի անհատական հաշվառման հետ այն տեղերում, վորտեղ արտադրության պայմանները թույլ են տալիս։

Բամբակի հավաքը պետք է անցկացվի բրիգադային գործավարձի հիմունքով՝ յուրաքանչյուր կոլտնտեսական կողմից առանձնապես՝ անհատապես հավաքած բամբակի պարտադիր հաշվառման հետ միասին։

6) Հացահատիկային, բամբակի և մյուս կուլտուրաների բերքահավաքի իր ժամանակին կատարումը, այն հաշվով, վոր աշնանային և ձմեռային աշխատանքների (աշնանացան, նախնական հերկ, ձմեռվա արած, խոփենտարի վերանորոգություն) կատարման համար ազատվի բանվորական ձեռքեր, վորպեսզի իր հերթին ապահովվի գարնանացանի նախապատրաստումը, բամբակի և մյուս կուլտուրաների բերքատվության բարձրացումը 1933 թվի ընթացքում։

Այս բոլոր միջոցառումները պետք է անցկացվեն կոլխոզնիկների, միջակ – մենատնտեսների, չքավորների մեջ ընդարձակ մասսայական – բացատրական աշխատանքի հիման վրա։ ԽՍՀՄ Ժողկոմխորհի և Համ. Կկ (բ) Կենտկոմի 1932 թվի բերքահավաքի կամպանիայի, հացամթերումների պլանի, կոլխոզային կադրերի, կոլտնտեսական առևտրի, անասունների սոցիալական համայնացման վերացման մասին ունեցած վորոշումների լայնորեն մշակման, ինչպես նաև հեղափոխական օրինականության մասին կառավարության վորոշումների հանրամատչելի դարձնելու ճանապարհով, կիրառելով վճռական պայքար կոլխոզների և կոլտնտեսականների օրենքով սահմանված իրավունքների խախտումների դեմ (վարչությունների և նրա մարմինների ընտրողականությունը, կոլխոզի ունեցվածքի և դրամի վրա կամակատար հարկադրությունները, աշխատանքային օրերի լուրջ առ ու ծախսը, հրամայելը և այլն)։

Հատուկ ուշադրություն նվիրել բնական և դրամական յեկամուտի միմիայն աշխատած աշխատանքային օրերի քանակի համաձայն բաշխելուն, ինչպես նաև կոլխոզի բրիգադայի և կոլտնտեսականի նկատմամբ հավասարեցուցիչ մոտեցում ունենալու վերացմանը։

ԱՍԽՀ կոլխոզներում 1932 թվի ավանսների և յեկամուտների բաշխման կարգը, ժամկետները և բոլոր միջոցառումները պետք և անցկացվեն լրիվին համապատասխան Համ. Կկ (բ) Կենտկոմի 1932 թ. փետրվարի 4-ի և ԽՍՀՄ Ժողկոմխորհի ու Համ Կկ (բ) Կենտկոմի 1932 թ. հուլիսի 5-ի վորոշումների համապատասխան և ապահովվի հացահատիկային, տեխնիկական կուլտուրաների, հատկապես բամբակի բերքահավաքի անհամեմատ ավելի արագ նախապատրաստումը։

## I ԱՎԱՆՍՆԵՐԻ ՏԱԼՈՒ ԿԱՐԳԸ

Սահմանել բնական մթերքների ու դրամական ավանսների բաց թողնելու հետևյալ [illegible] յուրաքանչյուր կոլտնտեսա-

1. Ավանսները [illegible]

ՀՍՍՌ Պետական Գրադարան
Гос Библиотека
ՀՍՍՌ-Арм ССР
им. А. Мясникяна
Ա. Մյասնիկյանի անվան
БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук СССР

կանի աշխատած և նրա աշխատանքային գրքույկում գրանցված իրական աշխատանքային օրերի համապատասխան:

2. Կոնտրակտացված արտադրանքի դիմաց մթերող մարմիններից ստացված հացահատիկը պետք է ամբողջովին և անմիջապես տրվի կոլտնտեսականներին ըստ նրանց աշխատանքային օրերի: Սեփական բերքի հացահատիկից արդեն իսկ կալսելու պրոցեսում անհրաժեշտ է բաց թողնել կոլտնտեսականներին վորպես ավանս բնական յեկամուտի փաստորեն կալսված հացի 10–15 տոկոսի չափով՝ լրիվին համապատասխան աշխատած աշխատանքային օրերի քանակությանը:

3. Կոլխոզի կողմից հանձնված (վաճառված) արտադրանքի դիմաց ստացած դրամի հիմնական մասն առանց վորևե հապաղման անմիջապես պետք է տրվի կոլտնտեսականներին ավանսի կարգով նրանց ունեցած աշխատանքային օրերի քանակի համաձայն:

## II ՅԵԿԱՄՈՒՏԻ ԲՆԱԿԱՆ ՅԵՎ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԱՍԵՐԻ ԲԱՇԽՈՒՄԸ

ԽՍՀՄ Ժողկոմխորհի և Համ. ԿԿ (բ) Կենտկոմի 1932 թվի վորոշումների համաձայն ԱՍԽՀ Հողժողկոմատը և Կոլխոզկենտրոնը հանձնարարում են բոլոր կոլտնտեսությունների վարչություններին 1932 թ. յեկամուտների բաշխման ժամանակ ղեկավարվել հետևյալով.—

1. Կոլխոզների ընդհանուր յեկամուտից առաջին հերթին կատարվում է պետական պարտավորությունները (պետ. մթերումների կատարումը, գյուղ. միաս. հարկի վճարումը, ապահովագրման և վարկային պարտքերի գումարների վճարումը), առանձնացվում են սերմացուի, անասունների կերի և հատկացումներ են կատարվում անշարժ ֆոնդի և 2 տոկոսային համայնացված ֆոնդի (պրոդուկտիվ անասունների և յերկար տարիների տունկերի):

Մնացած յեկամուտի ամբողջ մասսան բաժանվում է կոլտնտեսականների միջև ըստ աշխատանքային օրերի:

2. Յեկամուտի մթերային մասը հանձնարարվում է բաժանել հետևյալ կարգով.

ա) կատարվում է կոնտրակտացիայի պայմանագիրը կամ ընդհանուր ժողովի կողմից ընդունված հացահատիկի, կերի, մսի և այլ մթերքների պետական մթերման պլանը.

բ) առանձնացվում է 1932 թվի աշնանը և 1933 թ. գարնանը ցանքային տարածությունները ապահովող սերմֆոնդը՝ հաշվի առնելով կոլտնտեսության ներսում ցանքերի տարածության լայնացումն, համաձայն տվյալ ռայոնի մասնագիտացմանը, և սերմֆոնդի 15 տոկոսի չափով ապահովագրական ֆոնդը:

գ) պետական մթերումների գծով արտադրանքի հանձնումը վերջացնելուց, սերմնացու և կերի ֆոնդերն առանձնացնելուց հետո, հացահատիկի մնացած ամբողջ մասսան առանց վորևե հապաղման բաժանվում է կոլտնտեսականների միջև միմիայն աշխ-գրքույկներում գրանցված աշխատանքային օրերի քանակի համաձայն.

դ) «Կոլտնտեսությունների ադմինիստրատիվ ղեկավարչու-



կան կազմը անկախ իրենց գրանցված աշխ. օրերի քանակի չըպետք է ստանա բնական արտադրանքի այն քանակությունից բարձր, վորը տվյալ կոլխոզում միջին հաշվով ստանում է մշտական բրիգադայի մասնակից ամբողջ տարում նրան հանձնարարված աշխատանքը բարեխղճորեն կատարող կոլխոզնիկը» (ԽՍՀՄ Հողժողկոմատի և ԽՍՀՄ և ՌՍՖԽՀ Կոլխոզկենտրոնի 1932 թ. հուլիսի 11-ի վորոշումից).

Ծանոթություն. — Այն կոլխոզներում, վորտեղ հենց իր կոլխոզի կողմից անհրաժեշտ կհամարվի մինչև պետ. մթերման պլաններով սահմանված հանձնումների կատարելը, սերմնացու և կերի ֆոնդերի առանձնացումը թույլ է տրվում բնական յեկամուտի մասից բաշխման յենթակա արտադրանքի 15–20 տոկոսի չափով ավանսի բաշխումը կոլտնտեսականներին:

ե) բերքահավաքի, հացամթերման և յեկամուտի բաշխման ժամանակ կոլխոզներում անհրաժեշտ է ապահովել այնպիսի դրություն, վորպեսզի լավ ցանած, պարտաճանաչ կերպով հավաքած և իրենց համար սահմանված պետական մթերումները (կոնտրակտացիայի պայմանների համապատասխան) լրացրած կոլխոզները ունենան իրենց կարգադրության տակ սեփական կարիքների համար հացի ավելի խոշոր քանակություն:

3. Կերային արտադրանքի բաշխումը հանձնարարվում է կատարել հետևյալ կարգով.—

ա) կատարվում է կոնտրակտացիայի պայմանագիրը, կամ ընդհանուր ժողովի կողմից ընդունված պետական կերա-մթերումների պլանը.

բ) առանձնացվում է կոշտ համակենտրոնացած կերերի կերային ֆոնդը, հաշվի առնելով ինչպես ապրանքային ֆերմաներում, նույնպես և ֆերմայից դուրս համայնացված անասունների լիակատար պահանջի հետ հետագա լայնացման կանխագծումները, ինչպես նաև թերակատարման դեպքում ամբողջ կերի ֆոնդի 10 տոկոսի չափով ապահովագրական ֆոնդը:

գ) Կերի ամբողջ մնացած մասսան բաժանվում է կոլխոզնիկների միջև՝ համաձայն նրանց աշխատած օրերի, անպայման հաշվի առնելով անհատական օգտագործման համար ունեցած ամբողջ անասունների ապահովումը.

Սրա կապակցությամբ անհրաժեշտ է վորպեսզի «կեր չստացող, կամ ավելի քիչ ստացող կոլտնտեսականները դրա փոխարեն ստանան բնական յեկամուտի մյուս տեսակներ, միայն տվյալ կոլխոզում սահմանված աշխ. օրվա համար տրվելիք բնական պրոդուկցիայի սահմաններից չանցնելով (ԽՍՀՄ ԺԿԽ-ի և Համ. ԿԿ (բ) ԿԿ-ի 1932 թ. հուլիսի 5-ի վորոշումից):

4. Կոլխոզի դրամական մուտքը բաշխվում է հետևյալ ձևով.

ա) ծածկվում են 1932 թ. ժամկետները լրացրած արտադրական վարկի վճարումները, վճարվում են պետմիասհարկը և ապահովագրական մուծումները.

բ) անբաժան ֆոնդին հատկացվում է 15%-ն այն կոլխոզներում, վորոնք յերկրորդ անգամ են հավաքել բերքը և 10 տո-

կոտ այն կոլխոզներում, վորոնք առաջին բերքն են հավաքել: Անբաժանելի ֆոնդը առանձնացվում է փողով (ռուբլիներով):

Ծանոթություն.— 1) Անբաժանելի ֆոնդը հաշվում է կոլխոզի ընդհանուր յեկամուտից, հանելով գյուղմթասհարկը, ապահովագրական գումարները և առանձնացրած սերմային և կերային ֆոնդերի արժեքը: 2. Ամբողջ տարվա ընթացքում կատարված կապիտալ ծախսերը (աշխատող անասունների, գյուղատնտեսական մեքենաների, խոշոր ինվենտարի ձեռք բերելը և կապիտալ շինարարություն) անց է կացվում ի հաշիվ անբաժանելի ֆոնդի.

բ) բացի անբաժանելի և 2 տոկոսային ունեցվածքային ֆոնդերից արգելվում է պարտադիր կարգով վորևե ֆոնդի առանձնացումը.

գ) կոլտնտեսական սեկտորի և նրա ճյուղային միացումների պահպանության համար բոլոր կոլխոզներն առանձնացնում են իրենց ընդհանուր դրամական ֆոնդի 1,5 տոկոսը.

դ) յեկամուտի դրամական մասի բաշխման ժամանակ ծածկվում են նաև կոլխոզնիկների կողմից իրենց վրա վերցրած պարտավորությունները (Տրակտորկենտրոնի ակցիաներ, յերկարատև արտադրական վարկի ֆոնդի անդամավճարներ, պայմանագրի համաձայն մեքենա-տրակտորային կայանի կատարած աշխատանքների վարձատրությունը).

ե) ծածկվում են բոլոր արտադրական և վարչա-դեկավարչական ծախսերը, վորոնք կատարված են ամբողջ տարվա ընթացքում.

զ) դրամական մուտքի ամբողջ մնացած մասը բաժանվում է կոլտնտեսականների մեջ, աշխատած աշխատանքային օրերի քանակի համապատասխան:

## III ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ

Կոլտնտեսականներին ավանսների և յեկամուտի ճիշտ բաշխումը կարող է ապահովվել միմիայն ինչպես բերքի, նույնպես և կոլտնտեսականների աշխատանքային ծախսումների վորակի, քանակի լրակատար և ճիշտ հաշվառման ժամանակ. սրա համար—

1. Կոլխոզների վարչությունները պետք է սահմանեն հավաքված բերքի և անասնապահության արտադրանքի խիստ հաշվառում, պարտադիր կերպով յուրաքանչյուր արտադրական բրիգադայի գծով, այն հաշվով, վորպեսզի հաշվի առնվի յուրաքանչյուր առանձին բրիգադայի կատարած աշխատանքը:

2. Յուրաքանչյուր կոլխոզ մինչև բերքահավաքի սկիզբը պարտավոր է ստուգել և վերջացնել աշխատած աշխատօրերի գրանցումներն աշխատ. գրքույկներում և բրիգադաների գծով աշխատանքի հաշվառման գրքույկներում, իսկ անդամագրքույկներում կոլխոզնիկների ստացած դրամական և նյութական ավանսները սկսած ս. թ. հունվարի 1-ից:

Աշխօրերի ստուգումն ու ի մի բերելը պետք է կատարվի կոլխոզային վողջ ակտիվի լայն մասնակցությամբ, վորի արդյունքներն անպայման պետք է քննվի և հաստատվի կոլտնտեսականների ընդհանուր ժողովի կողմից:

3. Կոլտնտեսությունների վերստուգիչ հանձնաժողովներին անհրաժեշտ է պարբերաբար ստուգել ստացած մթերքների հաշվառքի ճշտությունը, մուտքի և յելքի իր ժամանակին գրանցումը և յուրաքանչյուր հնգօրյակում կոլտնտեսականների աշխգրքույկներում գրանցվող աշխօրերի ճշտությունը:

Վերստուգիչ հանձնաժողովները պետք է պարբերաբար յերևան հանեն կոլխոզի հաշիվները մեքենա-տրակտորային կայաններ, պետբանկի և մյուս կազմակերպությունների հետ, վոչ ուշ քան ամիսը մեկ անգամ, այդ մասին զեկուցելով կոլտնտեսականների ընդհանուր ժողովին:

ԱՍԽՀ Հողժողկոմատը և Կոլխոզկենտրոնը հանձնարարում են կոլխոզներին յեկամուտի բաշխման հետևյալ կարգը և ժամկետները:

1. ԱՍԽՀ կոլխոզներում 1932 թ. յեկամուտի վերջնական բաշխումը պետք է վերջացվի 1933 թ. հունվարի 10-ին հացահատիկային, անասնապահական և այգեգործական շրջաններում և հունվարի 15-ին բամբակագործական շրջանների կոլխոզներում:

2. Կոլխոզների վարչությունները, շրջհողբաժինները, շրջկոլխոզմիությունները, մեքենա-տրակտորային կայանները պետք է անմիջապես ծավալեն ներկա վորոշման լայն մշակումը այնպես, վոր վոչ ուշ քան ս. թ. ոգոստոսի մեկը յուրաքանչյուր կոլխոզի կոլտնտեսականների ընդհանուր ժողովում քննվի և սահմանվի յեկամուտի բաշխման կարգը:

3. Մինչև ներկա վորոշման մշակումը կոլխոզներում, յուրաքանչյուր շրջանում յեկամուտների բաշխման առիթով հրավիրել կոլխոզների նախագահների, վարչության անդամների, վերստուգիչ հանձնաժողովների, հաշվետարների և շրջանային ակտիվի 2-օրյա հրահանգչական խորհրդակցություններ:

Սրա հետ միասին ոգոստոսի 20-ից մինչև սեպտեմբերի 1-ը հրավիրել յեկամուտի բաշխման տեխնիկան յուրացնելու համար հաշվետարների կուրսեր: 1932 թ. յեկամուտների ճիշտ և ժամանակին բաշխումը հանդիսանում է կոլխոզների կազմակերպչական տնտեսական և քաղաքական ամրապնդման գործում կարևորագույն միջոցառումներից մեկը: Այս տարի վոչ մի կոլխոզում չպետք է թույլ տրվի կուլակային հավասարեցումը և կոլխոզային յեկամուտները պետք է բաշխվեն ծախսված աշխատանքի վորակական և քանակական ցուցանիշների համապատասխան:

Կուսակցության և կառավարության հրահանգները կյանքում հաջող կերպով կենսագործելով, բերքահավաքի և յեկամուտի բաշխման գործում ապահովենք կոլխոզների հետագա կազմակերպչական — տնտեսական ամրապնդումը, կոլխոզային առևտրի ծավալումը, կոլտնտեսականների նյութական կենցաղային աճի բարձրացումը և այսպիսով կործանիչ հարված տանք կուլակին և նրա ագենտուրային:

ԱՍԽՀ Հողժողկոմ՝ ԿԱՍՈՒՄՈՎ.
ԱՍԽՄ Կոլխոզկենտրոն՝ ԳԱՅԻԲՈՎ.

# ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆԱԿԱՆ ՅԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԲԱՇԽՄԱՆ ՄԱՍԻՆ

## ՀԱՄ. ԿԿ (Բ) ԱՆԴՐՅԵՐԿՐԿՈՄԻ ՎՈՐՈՇՈՒՄԸ

1. *Մի շարք կոլխոզներում, չնայած մթերումների պլանի կատարմանը, ամբողջ սերմացուների ֆոնդերի ցանելուն և բնական մթերքների ֆոնդերի առանձնացմանը, նկատվում է յեկամուտի բնական մասի (հացահատիկ և այլն) կոլտնտեսականների մեջ բաժանելու ուշացումներ, վորը հանդիսանում է Համ. ԿԿ(բ) Կենտկոմի հուլիսի 5-ի վորոշման կոպիտ խախտումը և բացասական ազդեցություն է գործում գյուղատնտեսական կամպանիայի հաջող անցկացման վրա:*

2. *Առաջարկել հանրապետությունների Կենտկոմներին անմիջապես ցուցմունք տալ բոլոր ռայկոմներին, հանրապետական կոլխոզկենտրոններին, ռայկոլխոզմիություններին և կոլտնտեսությունների վարչություններին կազմակերպել յեկամուտի բնական մասի փաստական բաշխման լայն ստուգումը և ապահովել բնական մթերքներն անմիջապես կոլտնտեսականներին բաց թողնելը:*

---



# ԿՈԼԽՈԶԱՅԻՆ ՀԱՇՎԱՌՔԻ ՅԵՎ ՅԵԿԱՄՈՒՏԻ ԲԱՇԽՄԱՆ ՄԻԱՄՍՅԱԿԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

## ԿԿ (Բ) ԱՆԴՐՅԵՐԿՐԿՈՄԻ ՎՈՐՈՇՈՒՄԸ

1. *Կոլտնտեսությունների կազմակերպչական – տնտեսական ամրապնդման գործում հաշվառքի ճիշտ կազմակերպմանը և յեկամուտի բաշխմանը տալով առանձնահատուկ կարեվոր նշանակություն, հավանություն տալ Անդրկոլխոզկենտրոնի կոլխոզային հաշվառքի և յեկամուտի բաշխման միամսյակի մասին ունեցած վորոշմանը:*

2. *Անդրկոլխոզկենտրոնին — վողջ նախապատրաստական աշխատանքը կատարել և ավարտել այն հաշվով, վոր ապահովվի միամսյակի անցկացումը սույն թվի հոկտեմբերի 10-ից մինչև նոյեմբերի 10-ը:*

3. *Կոլխոզային հաշվառքի և յեկամուտի բաշխման միամսյակը անցկացնել աշնանային գյուղատնտեսական կամպանիայի (բամբակաքաղ, աշնանացան, պետության առաջ կոլտնտեսականների պարտավորությունների կատարումը) և կոլխոզների հետագա կազմակերպչական – տնտեսական քաղաքական ամրապնդման (աշխատանքների ճիշտ կազմակերպումը, աշխատանքի վորակի և քանակի համաձայն յեկամուտների բաշխումը, կադրերի պատրաստումը, կոլտնտառևտրի ծավալումը և այլն) նշանաբանի տակ:*

4. *Հանրապետությունների կենտկոմներին, շրջկոմների կուսակցության ռայկոմներին — միամսյակին տալ լայն տնտեսական-քաղաքական կամպանիայի բնույթ, ընդգրկելով բոլոր շահագրգռված կազմակերպությունների մասնակցությունը: Հանրապետությունների կենտկոմներին և կուսակցության ռայկոմներին մշակել կոլխոզային հաշվառքի և յեկամուտի բաշխման միամսյակը ծավալելու կոնկրետ միջոցառումներ և միամսյակն ապահովել պահանջվող ղեկավարությամբ:*

5. *Անդրկենտգործկոմին, Անդրարհմիությունների խորհրդին, Համ. ԼԿՅԵՄ Անդրյերկրկոմին — միամսյակի շրջանում ապահովել խորհրդային, արհեստակցական և կոմյերիտային կազմակերպությունների ակտիվ մասնակցությունը միամսյակի անցկացման գործում, ղեկավար աշխատողներին մոբիլիզացիայի յենթարկելով միամսյակի անցկացման համար:*

6. *Անդրկովկասյան, հանրապետական և ռայոնական թերթերի խմբագրություններին մամուլում լայնորեն լուսաբանել միամս–*

յակի ընթացքը՝ շրջաններն ու կոլխոզները գործուղղելով Թղթակիցների բրիգադաներ:

7. Ադրյերկրկոմի (բ) ագիտ — մասսայական բաժնին — Անդրհողժողկոմատի, Անդրբամբակկոմի, Անդրտրակտորկենտրոնի հետ միասին միամսյակի անցկացման գործում հանրապետական կազմակերպություններին օգնելու համար գործուղղել տեղերը պատասխանատու աշխատողներ:

---

# ԿՈԼԽՈԶՆԵՐՈՒՄ 1932 ԹՎԻՆ ՅԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԲԱՇԽՄԱՆ ՄԱՍԻՆ

## ԱԴՐԿՈՄԿՈՒՍԻ (Բ) ԿԵՆՏԿՈՄԻ ՎՈՐՈՇՈՒՄԸ

Համ. ԿԿ (բ) ԿԿ—ի հուլիսի 5—ի, Համ. ԿԿ (բ) Անդրյերկրկոմի սեպտեմբերի 20—ի, ինչպես նաև ԱԿԿ (բ) ԿԿ—ի անցյալի կոլխոզներում յեկամուտի բաշխման մասին ունեցած վորոշումների կենսագործման համար գտնել անհրաժեշտ.—

1. Կոլխոզներում 1932 Թ. յեկամուտների բաշխման վողջ նախապատրաստական աշխատանքը սկսել անմիջապես այն հաշվով, վոր դեկտեմբերի 15—ին բամբակագործական շրջաններում սկսվի 1932 Թվի ամբողջ յեկամուտների բաշխումը:

Ադրբեջանի մյուս 40 վոչ բամբակագործական շրջաններում նախապատրաստական աշխատանք անց կացնել հոկտեմբերի 1—ից մինչև դեկտեմբերի 1—ը այն հաշվով, վորպեսզի դեկտեմբերի ընթացքում վերջացվի 1932 Թվի բոլոր յեկամուտների անմիջական բաժանումը:

2. 1932 Թվի յեկամուտների բաշխումը անցկացնել տարեկան հաշվետվությունների կազման հետ միասին:

3. ԱԿԿ (բ) Կենտկոմը ընդգծում է, վոր յեկամուտների բաշխման ու տարեկան հաշվետվությունների պատրաստելու կազմակերպման ու անցկացումը շրջաններում դրվում է ԿԿ (բ) շրջկոմների և շրջանային կազմակերպությունների (շրջհողբաժին, մեքենա—տրակտորային կայան, շրջկոլխոզմիություն և մյուսներ) վրա:

Յելնելով սրանից, Կենտկոմը պարտավորեցնում է Ադր. ԿԿ (բ) շրջկոմներին կոնկրետ ծրագրերի և որացույցային ժամկետների հիման վրա, ապահովել ըստ սահմանված ժամկետների բոլոր կոլխոզներում յեկամուտների բաշխման ղեկավարությունը:

4. Հանձնարարել ընկ. ընկ. Ռուբանովին, Ասլանովին և Պիչախչուն 3 օրվա ժամանակամիջոցում մշակել յեկամուտների բաշխման կամպանիան՝ ապահովել համապատասխան մասնագետ հաշվապահներով և հաշվային աշխատողներով կոլխոզներում յեկամուտի բաշխման ամբողջ ընթացքում:

5. Հոկտեմբերի 25—ից Բագվում հրավիրել շրջանային, որլաստային շրջկոլխոզմիությունների նախագահների, ինչպես նաև շրջկոմների ագիտմասսբաժնի վարիչների, կոլտնտեսությունների շինարարության գծով մեքենա—տրակտորային կայանների դիրեկտորների տեղակալների խորհրդակցություն.

Հրահանգումը դնել ընկ. ընկ. Պիչախչու և Նայիբովի վրա.

հանձնարարել Հողժողկոմ ընկ. Կասումովին համապատասխան ցուցմունքներ տալ շրջհողբաժիններին:

6. Պարտավորեցնել Ադրտրակտորոկենտրոնին, Կոլխոզկենտրոնին նոյեմբերի 10–15 անցկացնել միջշրջանային հատուկ խորհրդակցություններ և մեքենա–տրակտորային կայանների մասնագետների և բոլոր աշխատողների հրահանգումն, ապահովել նրանց անմիջական մասնակցությունը և մեքենա–տրակտորային կայանի ղեկավար դերը յեկամուտների բաշխման և տարեկան հաշվետվությունների կազմման գործում:

7. Հանձնարարել Ադրկենտգործկոմին, Ադրարհմիությունների խորհրդին, Ադր. ԼԿՅԵՄ Կենտկոմին ցուցմունք տալ շրջանային կազմակերպություններին և ապահովել կոնկրետ ծրագրերի հիման վրա նրանց մասնակցությունը յեկամուտների բաշխման կամպանիայում:

8. Առաջարկել Հողժողկոմատին և Կոլխոզկենտրոնին առանձնացնել 10 հազար ռուբլու հատուկ ֆոնդ առաջնակարգ շրջանների և առանձին աշխատողների պարգևատրման համար:

9. Հանձնարարել Ժողկոմխորհին, ապահովել 1932 թվի յեկամուտների բաշխման կամպանիայի ծախսերի համար անհրաժեշտ միջոցների առանձնացումը:

10. Պարտավորեցնել Կենտկոմի ագիտմասսբաժնին, Հողժողկոմատին, Տրակտորոկենտրոնին, Կենտկոմի կուլտպրոպբաժնին և կենտրոնական ու տեղական թերթերի խմբագրություններին յեկամուտների բաշխման կամպանիայի նախապատրաստման շրջանում անցկացնել լայն բացատրական աշխատանք:

Կոլխոզկենտրոնին — հրատարակել 1931 թվի յեկամուտների բաշխման արդյունքների և 1932 թ. կամպանիայի նյութերի մասին հատուկ բրոշյուր:

Ռադիոյի միջոցով կազմակերպել մի շարք դեկուցումներ, դասախոսություններ և այլն:



# ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ ԱՍԽՀ ԿՈԼԽՈԶՆԵՐՈՒՄ 1932 Թ. ՅԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԲԱՇԽՄԱՆ ԿԱՄՊԱՆԻԱՅԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՅԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ

## ԱԴՐԿՈԼԽՈԶԿԵՆՏՐՈՆԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՎՈՐՈՇՈՒՄԸ

Կուսակցության և կառավարության վորոշումների համաձայն կոլխոզային յեկամուտների ճիշտ և ժամանակին բաշխումը հանդիսանալու է կոլտնտեսությունների հետագա կազմակերպչական–տնտեսական և քաղաքական ամրապնդման գլխավոր լծակը, ու բարձրացնելու է կոլխոզնիկների նյութական վիճակը:

Հաշվառքի դրվածքը, ճիշտ ավանսավորումը, ինչպես նաև յեկամուտների բաշխման նախապատրաստումը և հաջող անցկացումը կապահովեն բամբակի, այգեգործության և մյուս տեխնիկական կուլտուրաների բերքի (ծխախոտ, կանեփ, բրինձ և ուրիշ.) անհամեմատ քիչ կորուստներով իր ժամանակին հավաքելը. մոբիլիզացիայի կենթարկի կոլխոզային, չքավոր–միջակային մասսաներին 33 թվի պլանների կատարման, բերքատվության բարձրացման շուրջը. կհարվածի կուլակին և նրա ագենտուրային, կբարձրացնի կոլխոզային մասսաների զգոնությունը գողությունների դեմ և ունեցվածքի պաշտպանության համար մղվող պայքարի գործում և կտանի կոլխոզային առևտրի հիման վրա դեպի ապրանքաշրջանառության հետագա ընդարձակումը:

Հաշվի առնելով անցյալ տարվա յեկամուտների բաշխման փորձը, Ադրբեջանի Կոլխոզկենտրոնի վարչությունը վորոշում է.

1. Ծավալել և անցկացնել յեկամուտների բաշխման նախապատրաստական աշխատանքները 1932 թ. հոկտեմբերի 1-ից մինչև դեկտեմբերի 1-ը, վոչ բամբակագործական շրջաններում, իսկ մինչև դեկտեմբերի 15-ը բամբակագործական շրջաններում: 1932 թ. յեկամուտների վերջնական բաշխումն անցկացնել միաժամանակ տարեկան հաշվետվության կազմելու հետ բամբակագործական շրջաններում 1932 թ. դեկտեմբերի 1-ից մինչև հունվարի 10-ը, իսկ վոչ բամբակագործական շրջաններում, դեկտեմբերի 1-ից մինչև 33 թվի հունվարի 1-ը:

2. Յեկամուտների բաշխումը և տարեկան հաշվետվությունների կազմումը անց է կացվում շրջանային կազմակերպությունների (ԱԿԿ (բ) շրջկոմների, շրջկոլխոզմիությունների և մեքենա–տրակտորային կայանների) ղեկավարությամբ կոլխոզային հաշվետարների և շրջանային կազմակերպությունների կողմից մոբիլիզացիայի յենթարկված հաշվային աշխատողների ուժերով:

3. Յեկամուտների բաշխման և տարեկան հաշվետվությունների կազմման գործում շրջաններին և կոլխոզներին գործնական ոգնություն ցույց տալու համար անհրաժեշտ համարել Բագվից մոբիլիզացիայի յենթարկել 60 պատասխանատու աշխատակիցների, 60 վորակավոր հաշվապահների և անհամեմատ հետ մնացող շրջանները ուղարկել 100 հաշվետարներ:

## ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԵՆՏՐ. ԵՎ ՇՐՋԱՆՆԵՐՈՒՄ

4. Հոկտեմբերի 25-ին Բագվում հրավիրել ոբլաստային և շրջանային կոլխոզմիությունների նախագահների, մեք.-տրակտորային կայանների դիրեկտորների տեղակալների և ԱԿԿ (բ) շրջկոմների ագիտ-մասսայական բաժինների վարիչների 2-օրյա խորհրդակցություն, յեկամուտի բաշխման և տարեկան հաշվետվությունների կազմման հարցերով:

5. Աշխատանքի սեկտորին—վոչ ուշ քան հոկտեմբերի 10-ը անց կացնել յերեք կոլխոզներում տարբեր ճյուղային ուղղությամբ յեկամուտների փորձնական բաշխում, նյութերն ոգտագործել հրահանգումների համար և հրատարակել թերթերում:

6. Նոյեմբերի 1-ից մինչև 10-ը անցկացնել Բագվից մոբիլիզացիայի յենթարկված աշխատակիցների հրահանգումը շրջկոլխոզմիությունների և մեքենա-տրակտորային կայանների հաշվապահների հետ միասին: Վոչ ուշ քան նոյեմբերի 12-ը Բագվից մոբիլիզացիայի յենթարկված բոլոր աշխատակիցները պետք է լինեն շրջաններում:

7. Կազմ-մասսայական սեկտորին—ապահովել տարեկան հաշվետվությունների և յեկամուտի բաշխման բլանկների և նրանց կից հրահանգների հրատարակումը և ուղարկել այդպիսիները շրջաններին վոչ ուշ քան հոկտեմբերի 30-ը:

8. Յեկամուտների բաշխումը և տարեկան պլանների կազմումը կոլխոզներում անց է կացվում մեք.-տրակտորային կայաններում, ագրո-շրջաններում, ինչպես նաև այն տեղերում, վորտեղ այդպիսիները (ՄՏԿ) չկա, գյուղխորհրդին կցվածների և շրջաննից մոբիլիզացիայի յենթարկված ակտիվի ղեկավարությամբ յեկամուտների բաշխման նախապատրաստման և տարեկան հաշվետվությունների կազմման ամբողջ ընթացքում. վոչ ուշ քան նոյեմբերի 25-ը բոլոր կցվածները և կենտրոնից ու շրջաններից մոբիլիզացիայի յենթարկվածները պետք է լինեն տեղերում:

9. Նոյեմբերի 12-ից մինչև 15-ը վոչ բամբակագործական շրջաններում և նոյեմբերի 20-ից 23-ը բամբակագործական շրջաններում անցկացնել կոլխոզների նախագահների, վերստուգիչ հանձնաժողովների նախագահների, ագրոմասերի վարիչների, գյուղխորհրդի նախագահների, կուսակցական և կոմյերիտական բջիջների քարտուղարների և ամբողջ շրջանային ակտիվի խորհրդակցություններ յեկամուտի բաշխման և տարեկան հաշվետվությունների կազմման հարցերով:

Առանձնապես անցկացնել կոլխոզների վերստուգիչ հանձնաժողովների խորհրդակցությունների հրահանգումն:

10. Նոյեմբերի 15-ից մինչև 25-ը շրջանային կենտրոններում հրավիրել կոլխոզների հաշվետարների, մոբիլիզացիայի յենթարկ



ված հաշվային աշխատողների, կցվածների կուրսեր, մեկ կամ յերկու կոլխոզում՝ յեկամուտի որինակելի բաշխման հետ միասին:

## ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿՈԼԽՈԶՆԵՐՈՒՄ

11. Նոյեմբերի 25-ից բոլոր կոլխոզներում անց կացնել յեկամուտների բաշխման և տարեկան հաշվետվությունների կազմման նախապատրաստման յերկտասնորյակ:

Կոլխոզներում յերկտասնորյակը սկսվում է կցվածների կամ կոլխոզի նախագահի կողմից յեկամուտների բաշխման և տարեկան հաշվետվությունների կազմելու մասին կոլխոզի ակտիվի կամ ընդհանուր ժողովում արված զեկույցներով, վորտեղ և ընտրվում են տարբեր հանձնաժողովներ (աշխորերի հաշվառքի, յեկամուտների հայտնաբերման և ֆինանսական հարցերի շուրջը և ուրիշներ): Նախապատրաստական յերկտասնորյակի առաջ դնել հետևյալ հիմնական խնդիրները.—

ա) մշտական բրիգադաների կազմի ստուգումն ու ամրապնդումն առաջադրությունների կատարման, յուրաքանչյուր բրիգադայի աշխատանքային նորմաների, աշխատանքի վորակի և նրան համապատասխան աշխատանքային որերի քանակի ավելացման և պակասեցման, կամ յուրաքանչյուր բրիգադայի աշխատանքային որերի գնահատության հաշվառքը.

բ) անդամագրքույկներով, աշխագրքույկներով նարյադների աշխորերի գրանցման և յուրաքանչյուր կոլխոզնիկի բրիգադայի և վողջ կոլխոզի աշխորերի ճիշտ հանրագումարի ապահովվածության ստուգումը.

գ) կոլխոզնիկների ավանսավորման և անդամագրքույկներում արված բնական և դրամական յեկամուտի ճշտության ստուգումը

դ) կորուստների, աշխորերի առ ու ծախսի ադմինիստրատիվ տնտեսավարական և բոլոր վոչ արտադրական ծախսերի դեմ պայքարելը: Պայքար գողությունների, զեղծարարությունների, չարագործությունների դեմ, նրանց կոնկրետ մեղավորների հայտնաբերումը և պատասխանատվության կանչելը.

ե) կոլխոզի հաշվային գրքերի և փաստաթղթերի կարգավորումը.

զ) մթերումների ասպարեզում պետական պարտավորությունների կատարման, կերային և սերմային ֆոնդերի առանձնացման ստուգումը.

ը) կոլտնտեսության վարկերի գծով պարտքերի հայտնաբերումը, ժամանակն անցած և կարճ ժամկետային պարտքերի վճարումը, առանձին կազմակերպությունների հետ փոխադարձ հաշիվների մաքրումը, և կոլխոզային ունեցվածքի վրա անորինական կարգադրությունների դեմ պայքարի կազմակերպումը: Նախորոք առանձնացված դրամական և նյութական ֆոնդերի կանխիկ լինելու և նրանց նպատակահարմար ծախսման ստուգումը:

Յերկտասնորյակը վերջանում է կոլխոզների վարչությունների և վերստուգիչ հանձնաժողովների ադմինիստրատիվ ու տնտեսավարական ծախսերի կրճատման, անտնտեսավարության կորուստների, գողությունների, զեղծումների աշխատանքային ո–

րիգում նրանց կատարած աշխատանքի մասին արված ինֆորմացիայով և յեկամուտների բաշխման ու տարեկան հաշվետվությունների կազմման նախապատրաստման համար ընտրված հանձնաժողովների զեկույցներով։

Յեկամուտների բաշխման և տարեկան հաշվետվությունների կազմման վողջ նախապատրաստական աշխատանքը պետք է ընթանա ընկ. Ստալինի ցուցմունքների կենսագործման, դիմազրկության, հավասարեցման լիակատար վոչնչացման, մշտական արտադրական բրիգադների ամրապնդման, մշտական բրիգադներին 1933 թվի ընթացքում մշտական հողամասի համապատասխան ինվենտարի, քաշող ուժի ամրացումը, 1932 թ. իրենց պլանների առաջադրությունները չկատարած բրիգադների կազմի վերանայման տեսանկյունով։

## ՅԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՎԵՐՋՆԱԿԱՆ ԲԱԺԱՆՈՒՄԸ

12. Յեկամուտների անմիջական բաշխումը, տարեկան հաշվետվության ձևերի լրացնելը, և կոլխոզնիկների հետ հաշիվների մաքրումն անց ե կացվում 1932 թ. դեկտեմբերի 15-ից մինչև 1933 թ. հունվարի 10-ը բամբակագործական շրջաններում և 32 թվի դեկտեմբերի 1-ից մինչև 33 թվի հունվարի 1-ը վոչ բամբակագործական շրջաններում։

13. Յեկամուտների բաշխման և տարեկան հաշվետվությունների կազմման վերջանալու ժամանակ նախ կոլխոզի վարչությունում, ապա կոլխոզնիկների ընդհանուր ժողովում մենատնտեսների հետ միասին կոլխոզի նախագահը հաշվետվություն է տալիս 1932 տնտեսական տարվա արդյունքների մասին և հաստատվում է յեկամուտների բաշխումն ու տարեկան հաշվետվությունը։

Տնտեսական տարվա արդյունքների և յեկամուտների բաշխման մասին հաշվետվությունը պետք է կապված լինի կոլխոզնիկների և չքավոր ու միջակային մենատնտեսների — վաղվա կոլխոզնիկների մեջ լայն բացատրական աշխատանք տանելու հետ, կոլտնտեսությունների կազմակերպչական տնտեսական ամրապնդման՝ անհատական տնտեսությունների, համեմատությամբ նրանց գերազանցությունը ցուցահանելով։

Այս հիման վրա հասնել չքավորների և միջակների կոլխոզներում ընդգրկմանը և ամրապնդել ԱՍԽՀ վողջ կոլխոզշարժման աճումը։

14. Յեկամուտների բաշխման և տարեկան հաշվետվությունների լրացրած բլանկները վոչ ուշ քան 1933 թվի հունվարի 10-ը ստուգվում են շրջկոլխոզմիություններում, մեքենա-տրակտորային կայաններում և միաժամանակ սրա հետ միասին կոլխոզմիությունները և մեքենա - տրակտորային կայանները մասնագետ աշխատողների միջոցով ստուգել կոլխոզնիկների փաստացի հաշվարկումները։

15. Յեկամուտների բաշխման և տարեկան հաշվետվությունների կազմման արդյունքներն ըստ շրջանների պետք է վերջացվի վոչ ուշ քան հունվարի 15-ը։ Այս իսկ ժամկետում պետք է բոլոր նյութերը ուղարկվեն Բաքու։



Կոլխոզնիկների կազմ-սեկտորի, աշխատանքի սեկտորի և բոլոր շրջկոլխոզմիությունների հետ միասին ապահովել յեկամուտների բաշխման գծով բոլոր ժողովների և հրահանգչական խորհրդակցությունների մանրակրկիտ նախապատրաստումն, այս ժողովներում անցկացնելով յեկամուտների բաշխման վողջ տնտեսական քաղաքական նշանակության բացատրությունը։

Ընկ. ընկ. Գայխովին և Նայխովին (ԿԽԿ) պատրաստել և 3 լեզուներով հրատարակել 10.000 որինակ 1931 թվի յեկամուտի բաշխման արդյունքների և 1932 թվի բաշխման նյութերի բրոշյուր մինչև հոկտեմբերի 25-ը։

Ընկ. ընկ. Նայխովին և Բաղդասարովին հրատարակել յեկամուտների բաշխման մասին 3 լեզուներով պլակատ (5,000 որինակ) և այն հասցնել կոլխոզներին վոչ ուշ քան նոյեմբերի 10-ը։

Շրջկոլխոզմիությունների, տեղական կազմակերպությունների գծով հրավիրել վերստուգիչ հանձնաժողովների, կոլխոզների արտադրական խորհրդակցությունների նիստեր և քննել յեկամուտների բաշխման հարցերը. ստուգել բոլոր կոլխոզային պատի թերթերի աշխատանքը և նրանցում լուսաբանել յեկամուտի բաշխման խնդիրները։ Շրջանային թերթերի հետ միասին գումարել գյուղթղթակիցների հատուկ խորհրդակցություններ և շրջանային մամուլի, կոլխոզային պատի լրագրերի ուշադրությունը կենտրոնացնել սահմանված ժամկետներում յեկամուտների հաջող և ճիշտ բաշխման վրա։

# ԿՈԼԽՈԶՆԵՐՈՒՄ ՅԵԿԱՄՈՒՏԻ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԱՍԻ ԲԱԺԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

## ՀԱՄ. ԿԿ (Բ) ԱՆԴՐՅԵՐԿՐԿՈՄԻ ՎՈՐՈՇՈՒՄԸ

1. Համ. ԿԿ (բ) Անդրյերկրկոմը համարում է բացարձակապես անթույլատրելի, յերբ յեկամուտի բաշխման ընթացքում առանձին կոլտնտեսությունները (Գյուրջանի շրջանի Բակուրցիխե գյուղի, Գյանջայի շրջանի Շահումյանի անվան, Իջևանի Սև քար գյուղի կոլտնտեսությունները) իրենց յեկամուտի դրամական մասը պետությանը ծախված արտադրանքի և կոլխոզային առևտրի շրջանառությունից ստացված ոգուտը չեն բաժանում կոլտնտեսականների միջև ըստ աշխօրերի, այլ ըստ կոլտնտեսությունների վարչությունների հայեցողությամբ ծախսվում են չվորոշված նպատակներով (պլանից դուրս շինարարություններ, տնտեսավարական ծախսերի ավելցում և այլն) վորի հետևանքը լինում է աշխօրերի արժեքի անկումը: Սրա հետևանքով կոլտնտեսականները զրկվում են իրենց կարիքների համար անհրաժեշտ արդյունաբերական ապրանքներ գնելու հնարավորությունից, վորը հանդիսանում է գյուղատնտեսական արտելի կանոնադրության կոպիտ աղավաղումը և վարչարարության կոպիտ ձևը:

2. Համ. ԿԿ (բ) Անդրյերկրկոմը ընդգծելով յեկամուտի բաշխման քաղաքական կարևորագույն խնդիրը՝ կոլտնտեսականների նյութական բարեկեցության բարձրացումը և դրա հիման վրա կոլտնտեսությունների կազմակերպչական – տնտեսական ամրապնդումը, առաջարկում է կուսակցության և շրջանային կոմիտեներին, Անդրկոլխոզկենտրոնին, հանրապետական կոլխոզկենտրոններին, ապահովել դրամական յեկամուտի այնպիսի բաշխում, վորի ժամանակ առանց վորևէ հապաղման և պարբերաբար կոլտնտեսականները մատակարարվեն ըստ աշխատանքային որերի կոլխոզային առևտրի շրջանառության և պետությանը հանձնված մթերքների դիմաց ստացած դրամով, թույլ չտալով կոլտնտեսության դրամական միջոցների առ ու ծախսը, խստորեն կենսագործելով միութենական կոլխոզկենտրոնի այն դրույթը, վոր կոլտնտեսության կողմից կապիտալ ներդրումների (շինարարություն, անասունների ինվենտարի գնումը, յերկար տարիների տունկեր և այլն) կատարման դրամական ծախսերը այս տարի պետք է անցկացվին 10–15 տոկոս անբաժանելի ֆոնդերի հաշվին:



## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Կոլխոզներում ճշտորեն բաժանենք յեկամուտները. «Պրավդա»-ի 1932 թ. հոկտեմբերի 19-ի № 290-ի առաջնորդողը: 3
2. Բերքահավաքի կամպանիայի մասին 1932 թ. ԽՍՀՄ Ժող. կոմխորհի և Համ. ԿԿ (բ) Կենտկոմի վորոշումը. 8
3. Կոլխոզներում 1932 թ. յեկամուտի բաշխման մասին ԽՍՀՄ Հողժողկոմատի կոլեգիայի և ԽՍՀՄ ու ՌՍՖԽՀ Կոլխոզկենտրոնի 1932 թ. հուլիսի 11-ի վորոշումը: 12
4. ԱՍԽՀ-ի կոլխոզներում 1932 թ. բերքի հավաքման և յեկամուտների բաշխման մասին. ԱՍԽՀ Հողժողկոմատի Կոլխոզկենտրոնի 1932 թ. հուլիսի 19-ի վորոշումը: 15
5. Կոլտնտեսությունների բնական յեկամուտների բաշխման մասին. Համ. ԿԿ (բ) Անդրյերկրկոմի վորոշումը: 22
6. Կոլխոզային հաշվառքի և յեկամուտի բաշխման միասնակի մասին. — Համ. ԿԿ (բ) Անդրյերկրկոմի վորոշումը: 23
7. Կոլխոզներում 1932 թվին յեկամուտների բաշխման մասին Ա Կ Կ (բ) Կենտկոմի վորոշումը: 25
8. Միջոցառումները ԱՍԽՀ-ի կոլխոզներում 1932 թ. յեկամուտների բաշխման կամպանիայի նախապատրաստման և անցկացման համար. Անդրկոլխոզկենտրոնի վարչության վորոշումը: 27
9. Կոլխոզներում դրամական յեկամուտների բաժանման մասին. Համ. ԿԿ (բ) Անդրյերկրկոմի վորոշումը: 32

ՀՍՍՌ-Арм ССР им. А. Мясникяна Մյասնիկյանի անվան

ԳԻՆԸ 35 Կ.

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

**МАТЕРИАЛЫ**

**об уборке урожая и распределении доходов в колхозах за 1932 год.**

Авернешр—1932

ՀՀ Ազգային գրադարան
NL0209898

30.733